Թվին ՌՈԾԳ [1653], մայիսի Ի [20]: Այսպէս է, ես Տէր Պետրոսս Թաղերմիղի որդի Խօշկայշինեցի պրէդիկտօր ջէնէրալ եւ Քուրտըստանայ միսիօնին-պրէֆէտ իմ ձեռանօս ձեռնագրեցի:

Ես Տէր Դօմինիկոս Պարոնլար ձեռնագրեցի, որ այսպէս է:

Այսպէս տէր Անդրիաս Շահբ[ու]նեցի Քոնոյ Սուրբ կենսայփրին մեծա[ւ-]որ ձեռնայգրեցի իմ ձեռնովնս:

Ես Յարիս ձեռնայգրեցի որ այսպէս այ:

Ես Պալիս Ապարներոյ Աղսաղալու վկայեմ որ այսպէս է:

Ես Բաբաջանս որ Ի [20] տարի Ապարներոյ տանուտէր եմ ելեր, վկայեմ որ այսպէս է:

Ես Սարգիսս Ապարներոյ Քանդխուդայ վկայեմ որ այսպէս է:

Ես Մանկերս Շահնադարի որդի վկայեմ որ այսպէս է:

Ես Եարազիզս Ճահկոյ գեղին եպիսկոպոսին երեսփոխան վկայեմ որ այսպէս է:

Ես Միրիջանս Խօշկաշինոյ գեղին եպիսկոպոսին երեսփոխան վկայեմ որ այսպէս է:

Ես Սիամոնս Խօշկաշինոյ Աղսաղալու վկայեմ որ այսպէս է:

Ես Միրզէս Խօշկաշինոյ Քանդխուդայ վկայեմ որ այսպէս է:

Ես Մուրատս Խօշկաշինոյ անցեալ տանուտէր վկայեմ որ այսպէս է:

SOCG, vol. 292, f. 370. Բնագիր:

9. Նախիջեւանի հայ կաթողիկէները Հաւատասփիւռ Ժողովին

[1653 թուական, յունիս 28, Ապարաներ]

Ցայտ լիցի գերաբարձր սուրբ իշխանացդ եկեղեցւոյ, որ մեր եպիսկոպոսն երեք ամիս կայ, որ փոխեալ է առ տէր, ոչինչ կողմանէ համաձայնութիւն չկայ վասն Եպիսկոպոսի: Քանզի հերետիկոսք եւ անօրէնք կան ի միջի, մանաւանդ սպասեն յերկուց արանցս այսոցիկ որ գալոց են ի սուրբ քաղաքէդ Հռոմայ, մէկն տէր Յակոբ կոչիւր եւ միւսն՝ տէր Ջվան: Սոքա բարի եւ կատարեալ արք են, բայց յոլով ժա-